




5. - Ապուղամբեանց Ս. Գրիգոր եկեղեցին.

կէ՛, Ապուղամբեանց, Գագկաշէն եկեղեցիները, ճարտարապետը շինուածքը բաժնելով յարկերու՝ կը յաջողի բրգաձեւ շինութիւն մը յառաջ բերել, որուն դա-

վաթին գետեղելով փոքրաշէն կաթողիկէն, անոր կու տայ դմբէթի պատրանք մը, այն տպաւորութիւնը յառաջ բերելով թէ այդ փոքրաշէն կաթողիկէն կը ծած-

կէ ամբողջ շինութիւնը: Մինչդեռ՝ իրա-կանին մէջ իւրաքանչիւր յարկին մասնա-կի տանիքներ կու դան նուազեցնել լուսամուտին ծածկելիք տարածութիւնը:

Կան ալ շինութիւններ, ուր լուսամուտ-կաթողիկէն կորսնցուցած է իր իսկական կոչումը, ան ոչ գմբէթի տեղ կը բռնէ, ոչ ալ լուսամուտի, այլ նկատուած է որպէս յատկանշական շինուածք մը ճարտարապետական ոճին եւ առ այդ գետեղուած է չէնքին վրայ: Մասնաւորաբար այս պարագան կը ներկայացնէր Անիի պարիսպներէն դուրսի՝ Հովա եկեղեցին:

Արդէն տեսանք թէ Հաղբատի ժամատունը որ ջլաւոր տանիքով մը ծածկուած ըլլալուն ալ պէտք էր ունենար գմբէթի, նորէն իր ջիւերուն դաւաթին կը դնէ լուսամուտ-կաթողիկէն: Բացայայտ է որ 'հոս' ճարտարապետը դայն է գետեղած

որպէս գմբէթ, այլ որպէս լուսամուտ եւ ոճին յատկանշիչ:

Բայց իրապէս լուսամուտի ըմբռնումով գործածուած կաթողիկէն օրինակ մը կը տեսնենք Սաղմոսավանքի վրայ, ուր կառուցուած թմբուկը, առանց որմի, կազմուած է սիւներու շարքով մը, ինչ որ կը դիւրացնէ օդի եւ լոյսի մուտքը չէնքն ներս:

Հայ չէնքը բաղդատաբար օտար նման-օրինակ շինութիւններու, փոքր կերպը-ւածք մը ունի եւ թերեւս ասոր համար է որ ան համաչափութեան գլուխ գործոց մը եղած է: Նման չէնքի մը վրայ գետեղուած լուսամուտ-կաթողիկէն բաւական է ներքին լուսաւորումին: Բայց պարզան նոյնը չեղաւ օտար ոճերու մէջ ուր հայկական լուսամուտ-կաթողիկէն մուտք դտաւ:

(Նարեկեանի) ՃԱՐՏ. Ս. ՃԵՎԱԶԻՐԵԱՆ

Ծ Ա Ր Ա Ի

Ծարաւն եմ ես քեզի՛ բրիտոմ ջինջ աղբիւրին.
Բայց ուր է ան՝ որ ժայռերուն ծոցէն կու գայ.
Կը լըսեմ ձայնն ու չեմ գտներ ես անիկա.
Այդեօք սառած աղամանդ է ձըմեռնային...

Կը լըսեմ ձայնն յիշողութեանըս ընդ մէջէն
Մանուկ տրդուն որ երաժիշտ էր ժպտագին
Սուրբ Նըշանի վանքն՝ ամառուան եղանակին.
Ու զանգակներն անոր կարծես գեռ կը հնչեն...

Վեհ կերպարանք մը կը հսկէր ճամբաներուն՝
Որոնց վըրայ առաւելան լոյսը կը ցաթէր,
Երբ կը բացուէր կապոյտ գիշերն՝ աստեղատուն.

Ամէն քարէ կը հսկէր ջուրը մարգարիտ.
Ահ, այդեօք չեմ ամբողջ սափորը լեցուցեր,
Որ գեռ հոգիս անհուն ծարաւն է աղբիւրիդ...

ԱՐՄԵՆ ԵՐԿԱԹ